Երվանդ Նազարեթյան

Ձմռան գիշերն է՝ իմ պատուհանից

Ձմռան գիշերն է՝ իմ պատուհանից,

Եվ մի ներդաշնակ խոսուն երեկո,

Բնության շուքը պարուրել է ինձ

Իր սքանչելի պատկերի ներքո:

Դիմացի շենքի լույսերն են հանգում,

Հերթով մարմրում ճերմակ քողի մեջ,

Կարծես աղմուկից աշխարհն է քնում,

Եվ արթնանում են տեսիլներն անշեջ:

Ձյան փաթիլները պարում են քնքուշ՝

Լապտերների վառ փռված լույսի տակ,

Հեքիաթ են հյուսում մեղմիկ ու անուշ՝

Ճերմակափայլով վեհ ու բովանդակ:

Հեռվում անտառն է ճերմակը հագին,

Նազում է, իբրև չքնաղ նորահարս,

Ու անձեռակերտ շղարշով անգին

Ձյան հետ ձուլվելով վրձնում է երազ:

Իսկ այս ծառերի անհատակ խորքից

Հին եկեղեցու գմբեթն է փայլում,

Երկինքը ճեղքում Խաչի Սուրբ լույսից՝

Ես այս հոգեթով պահն եմ վայելում:

Ձմռան գիշերն է՝ իմ պատուհանից,

Եվ մի մոսկովյան խոսուն երեկո,

Բնության շուքը պարուրել է ինձ:

Աստված իմ, Մեծ ես, Մեծ է Փառքը Քո...